

Նախապես հաստատվել է

«ԷԷՏՕ» ՓԲԸ խորհրդի 06.05.2015թ. նիստում

Հաստատվել է

«ԷԷՏՕ» ՓԲԸ 06.06.15թ. 06.15թ. փողովում  
ՀՀԷՆ ԲԴ նախարար

  
ԶԱՆԱՐՅԱՆ

**«Էլեկտրաէներգետիկական  
համակարգի օպերատոր» ՓԲԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ  
ՆԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

***I. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների և ենթակառուցվածքների մասին***

***II. Արտադրական գործունեություն***

***III. Ֆինանսատնտեսական գործունեություն***

***IV. Աշխատանք և աշխատավարձ***

***V. Եզրափակիչ դրույթներ***

***VI. Հավելվածներ***

## I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<i>անվանումը` հայերեն լրիվ</i>	-	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն
<i>կրճատ</i>	-	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
<i>ռուսերեն լրիվ</i>	-	Закрытое акционерное общество “Оператор электроэнергетической системы”
<i>կրճատ</i>	-	ЗАО “Оператор электроэнергетической системы”
<i>անգլերեն լրիվ</i>	-	«Electro power systems operator» Closed joint-stock company
<i>կրճատ</i>	-	«Electro power systems operator» CJSC
<i>հասցեն` հեռախոս` ֆաքս` էլ.փոստ` ինտերնետային կայք` հարկ վճարողի հաշվառման համարը</i>	-	ՀՀ, 0009, Երևան, Արուսյան փողոց 27 (+37410) 524725 (+37410) 547317 <a href="mailto:office@energyoperator.am">office@energyoperator.am</a> <a href="http://www.energyoperator.am">www.energyoperator.am</a> 01547732

*«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ հաշվարկային հաշվի համարները`*

«Արդշինհիմնվեստբանկ» ՓԲԸ	
«Աղասյան» մասնաճյուղ	247460049700
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	1930001668200100
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	
«Մյասնիկյան» մասնաճյուղ	16044033655200
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ	2380023919160100

*Պետ.ռեգիստրում գրանցման համարը և անսաթիվը`  
27312003639, 05.11.2003թ., վկայականի թիվ 03 Ա 062403*

*իրավակազմակերպական ձևը`  
փակ բաժնետիրական ընկերություն*

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԱՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՆԳՎԱԾՐՆԵՐ

- ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով
- բ) Խորհուրդ

զ) Խորհրդի հանձնաժողովներ (2014թ. ընթացքում չեն ստեղծվել)

դ) գործադիր մարմին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1883495480 դրամ, որը կազմում է 311837 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 6040 դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից:

## **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեությունը իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է գործունեության հետևյալ հիմնական տեսակներով.

1. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ տեխնոլոգիական և տնտեսական կարգավարում.
2. էլեկտրաէներգետիկական համակարգի (արտադրության, ներկրման, արտահանման և տարանցման) գործառույթների՝ ըստ կնքված պայմանագրերի համակարգային պլանավորում ու կոորդինացում.
3. էլեկտրաէներգետիկական համակարգում համաձայն լիցենզիայի պայմանների և Շուկայի կանոնների համակարգային նշանակության կառավարման և պաշտպանության սարքերի նախադրվածքների հաշվարկում, դրանք էներգիայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց առաջադրում և դրանց (այդ սարքերի) աշխատանքի հսկում.
4. տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովում.
5. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ և տեխնոլոգիական կապի, էներգահամակարգի դիսպետչերական և տեխնոլոգիական կապերի, հեռուստամեխանիկայի սարքավորումների շահագործում և նորոգում:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ,

Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեության ժամկետը 2010 թվականին երկարաձգվել է մինչև 2015թ. դեկտեմբերի 9-ը:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**1. Բաժնետիրոջ ընդհանուր ժողով՝** Ընկերության կառավարման բարձրագույն մարմին.

Երվանդ Վազգենի Զախարյան - ԶՅ էներգետիկայի և բնական պաշարների նախարար,

ընկերության բաժնետոմսերի կառավարման 100% լիազորությունները իրականացնող

Չաշվետու տարում գումարվել են տարեկան ընդհանուր ժողով (13.06.2012թ.) և երկու արտահերթ ընդհանուր ժողով (14.02.2012թ. և 05.10.2012թ.): Բոլոր ժողովները գումարվել են Չանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում:

**2. Խորհուրդ՝** Ընկերության կանոնադրության 13 հոդված (13.1-ից 13.7 կետեր)՝ սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր»  
փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) Խորհրդի  
Կ Ա Ջ Մ Ը



Իոսիֆ Գեորգիի Իսայան

ԶՅ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ, Խորհրդի նախագահ



Արտակ Ալբերտյան

ԶՅ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության վառելիքաէներգետիկ համալիրի և տնտեսության արտադրական այլ ոլորտների բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ



Արամ Չարությունյան

ԶՅ ԿԱ պետգույքի կառավարման վարչության լուծարման բաժնի պետ



Լյովա Ռազմիկի Գալստյան

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնակատար



Արամ Սուրենի Անանյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



Գագիկ Ռաֆայելի Մարկոսյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



Եվգենի Ալեքսեյի Բիբին

«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



Հովակիմ Սեդրակի  
Հովհաննիսյան

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



Սասուն Սաշայի Խաչատրյան

«Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



Արսեն Ռազմիկի Գրիգորյան

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



Աշոտ Լևոնի Մանուկյան

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն



Մնացական Անդրիասի  
Մնացականյան

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

## ԻՌՍԻՖ ԳԵՈՐԳԻԻ ԻՍԱՅԱՆ



*Պաշտոնը – Նախարարի տեղակալ*

*Անուն, հայրանուն, ազգանուն - Իրուիֆ Գեորգիի Իսայան*

*Ծննդյան ամսաթիվը և տարին, ծննդավայրը - 04.10.1949թ. ք. Թեթրի-ծղարո  
(Վրաստանի Հանրապետություն)*

*Կրթությունը (ուսումնական հաստատության անվանումը և ավարտելու տարեթիվը) - Բարձրագույն, Մոսկվայի Պլեխանովի անվան ժող. տնտեսության ինստիտուտ, 1976թ.*

*Մասնագիտությունը - նյութատեխնիկական մատակարարման պլանավորում և տնտեսագիտություն*

*Որակավորումը - տնտեսագետ*

*Գիտական աստիճանը - տնտեսագիտական գիտությունների թեկնածու, 1981թ.*

*Ինչ օտար լեզուների է տիրապետում (նշել տիրապետման մակարդակը) - ռուսերեն (ազատ), վրացերեն (ազատ), անգլերեն (կարդում և կարող եմ բացատրվել)*

*Զինապարտությունը, զինվորական կոչումը - զինապարտ չեմ, լեյտենանտ*

*Պետական պարգևներ - <Անանիա Շիրակացի> մեդալ*

*Խրախուսանք(ներ) – ՀՀ Վարչապետի շնորհակալագիր /ՀՀ Վարչապետի 22.12.2003թ. N 654-Ա որոշում/, ՀՀ Վարչապետի հուշամեդալ, /ՀՀ Վարչապետի 28.12.2006թ. N 1051-Ա որոշում/  
Հասցեն (բնակության և հաշվառման) - ք. Երևան, 16 թաղ, 33 շենք, բն. 64*

*Ընտանեկան դրությունը - ամուսնացած եմ*

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

		հիմնարկի	
Սկիզբը	ավարտը	կամ կազմակերպության անվանումը,	պաշտոնը(ները)
1966թ.	1969թ.	Մոսկվայի Պլեխանովի անվան ժող. տնտեսության ինստիտուտ	ուսանող
1969թ.	1971թ.	Սովխոզ „Դինսկոյ,, /Կրասնոդարի երկրամաս/	բանվոր
1971թ.	1973թ.	Ծառայություն խորհրդային բանակում	
1973թ.	1976թ.	Մոսկվայի ժող. տնտեսության ինստիտուտ	ուսանող
1976թ.	1978թ.	ՀՍՍՀ մինիստրների խորհուրդ, Նյութատեխնիկական մատակարարման Գլխավոր վարչություն	ավագ ճարտարագետ
1978թ.	1981թ.	Մոսկվայի ժող. տնտեսության ինստիտուտ	ասպիրանտ
1982թ.	1992թ.	ՀՍՍՀ Նյութատեխնիկական մատակարարման Պետական կոմիտե	վարչության պետ, նախագահի տեղակալ
1982թ.	1990թ.	Երևանի ժող. Տնտեսության ինստիտուտ	դասախոս, դոցենտ /համատեղությամբ/
1992թ.	1993թ.	ՀՀ կառավարություն	տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ, բաժնի պետ
1993թ.	1994թ.	„Միրաժ,, շինարարական կազմակերպություն /ք. Մոսկվա/	տնօրենի տեղակալ
1994թ.	1996թ.	„Անահիտ,, ֆիրմա /ք. Մոսկվա/	տնօրեն
1996թ.	1999թ.	„Հայէներգո,, ՊՓԲԸ	Տնտեսագիտական վարչության պետ, գործադիր տնօրենի տեղակալ
1999թ.	2001թ.	ՀՀ էներգետիկայի նախարարություն	ֆինանսական հարցերով ֆինանսատնտեսագիտական գլխավոր վարչության պետ,
2001թ.	2002թ.	ՀՀ էներգետիկայի նախարարություն	նախարարի տեղակալ, „Հայէներգո,, ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ
2002թ.	2008թ.	ՀՀ էներգետիկայի նախարարություն	նախարարի տեղակալ
2008թ.	ն/ժ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	նախարարի տեղակալ



## *Արտակ Ալբերտյան*

Ծնվել է 1974 թ. փետրվարի 26-ին: Կրթությունը բարձրագույն: Ավարտել է Երևանի Պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի կառավարում և տնտեսական կապեր ֆակուլտետի «Աշխատանքի էկոնոմիկա և սոցիոլոգիա» բաժինը: Ունի տնտեսագետի որակավորում:

Ավարտելուց հետո 1998թ. աշխատանքի է անցել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում, որպես առաջատար մասնագետ, 2000թ. որպես գլխավոր մասնագետ: 2002թ. նշանակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ճյուղային տնտեսական ծրագրերի վարչության արդյունաբերության, տրանսպորտի և կապի ծրագրերի բաժնի պետի տեղակալ: 2005թ. աշխատել է որպես նույն նախարարության հանրային ծառայությունների ոլորտների ծրագրերի վարչության վառելիքաէներգետիկ համալիրի ծրագրերի բաժնի պետ: 2011թ. նշանակվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի արտադրական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության վառելիքաէներգետիկ համալիրի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ, իսկ 2014թ. նշանակվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության վառելիքաէներգետիկ համալիրի և տնտեսության արտադրական այլ ոլորտների բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ում չի աշխատել, ընկերության խորհրդի անդամ է 2014թ. օգոստոսից: Այլ ընկերություններում չի աշխատում, 2006թ-ից հանդիսանում է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ-ի, իսկ 2014թ-ից՝ «ԲԷՑ» ՓԲԸ-ի, «ՀԱԷԿ ՓԲԸ-ի և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի խորհրդի անդամ:

## Արամ Հարությունյան



Անուն, հայրանուն, ազգանուն – Արամ Հարությունյան  
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 102, բն. 6  
Հեռ. (094) 40 37 66  
Էլ. Հասցե՝ [aram102@yahoo.com](mailto:aram102@yahoo.com)

Ծննդյան տարեթիվ 06/12/1970

### Կրթություն

1987-1993թթ. Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ, տնտեսագետ-կազմակերպիչի որակավորում

### Աշխատանքային գործունեություն

1993-1998թթ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչություն, որպես տնտեսագետ, բաժնի պետի տեղակալ

1998-2002թթ. ՀՀ սեփականաշնորհման նախարարություն, որպես բաժնի պետի տեղակալ, բաժնի պետ

2002-2004թթ. «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, որպես բաժնի պետ

2004-2006թթ. «Ընկերությունների աջակցման և պետական գույքի գնահատման գործակալություն» ՊՈԱԿ, որպես վարչության պետ

2006-2008թթ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, որպես գլխավոր աուդիտոր

2008թ. առ այսօր ՀՀ ԿԱ պետ գույքի կառավարման վարչության լուծարման բաժնի պետ

### Ընտանեկան դրություն

ամուսնացած, ունի երեք երեխա



## ԼՅՈՎԱ ՌԱԶՄԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆ

- |   |  |
|---|--|
| <i>Անուն, ազգանուն, հայրանուն<br/>Պաշտոնը</i>           | - <b>Գալստյան Լյովա Ռազմիկի</b>  |
| <i>Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը</i>                     | - «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ<br>գլխավոր տնօրենի պկ<br>1961թ., 5 հունվարի,<br>ՀՀ Արարատի մարզ, գ. Արալեզ |
| <i>Ազգությունը<br/>Կրթությունը, ինչ է ավարտել և երբ</i> | - Հայ<br>- Բարձրագույն, Երևանի<br>ժողովրդական տնտեսության<br>ինստիտուտ, 1983թ.                         |
| <i>Մասնագիտությունը</i>                                 | - «պարենային ապրանքների<br>ապրանքագիտություն և առևտրի<br>կազմակերպում»                                 |
| <i>Որակավորումը</i>                                     | - ապրանքագետ   |
| <i>Գիտական աստիճանը</i>                                 | - -  |
| <i>Օտար լեզուների տիրապետումը</i>                       | - Ռուսերեն   |
| <i>Հասցեն</i>   | - ք.Երևան, Զաքյան փող., շ. 4, բն.4   |
| <i>Ընտանեկան դրությունը</i>                             | - ամուսնացած   |

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- |                         |   |
|-------------------------|---|
| 1983 - 1991թ.թ.         | - «Արարատի քաղառ»- ապրանքագետ   |
| 1990 - 1994թ.թ.         | - ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանման ակտիվ մասնակից                               |
| 1991 - 2000թ.թ.         | - «Հայկոպ» - Արարատի հացի կոմբինատի տնօրեն                                    |
| 2000 - 2002թ.թ.         | - «Հարավային էլ.ցանցեր» - գլխ.տնօրենի տեղակալ,<br>գլխ.տնօրեն                  |
| 04.2002–<br>11.2002թ.թ. | - «Հայաստանի էլ.ցանցեր» - գլխավոր տնօրեն                                      |
| 2003 - 2007թ.թ.         | - ՀՀ Էներգետիկայի նախարարություն – նախարարի<br>խորհրդական                     |
| 2007 - 2012թ.թ.         | - «Էներգահինվեստ ԾԻԳ» - պետ.հիմնարկի տնօրեն                                   |
| 2013– 2014թ.թ.          | - «Էլեկտրարժեքագետիկական համակարգի օպերատոր»<br>ՓԲԸ - գլխ. տնօրենի խորհրդական |
| 13.01.2015թ.            | - «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ - գլխավոր տնօրենի պկ                              |



ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արամ Սուրենի Անանյանս ծնվել եմ 1955 թվականի մարտի 01-ին Ադրբեջանի Շամխորի շրջանի Բարսում գյուղում, ծառայողի ընտանիքում:

1961-1963թ.ռառամնական տարում սովորել եմ տեղի միջնակարգ դպրոցում:

1964թ. ընտանիքով տեղափոխվել եմ ք. Շամխոր, որտեղ և շարունակել եմ հաճախել տեղի Կարլ Մարքսի անվան միջնակարգ դպրոցը:

1972թ. ավարտել եմ միջնակարգ դպրոցը, ընդունվել աշխատանքի ք. Շամխորի միջըրջանային բազայում որպես բանվոր, աշխատել եմ 1 տարի:

1973-1974թթ. ընդունվել և սովորել եմ Կիրովականի շինարարական տեխնիկումում:

1974թ. ընդունվել եմ Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը, որը ավարտել եմ 1980 թվականին՝ ստանալով ինժեներ շինարարի որակավորում:

1980-1982թթ. ծառայել եմ սովետական բանակում, ստացել լեյտենանտի կոչում:

1975-1996թթ. աշխատել եմ Երևանի ռետինատեխնիկական իրերի գործարանում տարբեր պաշտոնների՝ բանվոր, հերթափոխի պետ, արտադրամասի պետ, ազատված արհկոմի նախագահ:

1996-2002թթ.՝ - „Շենգավիթ էլեկտրական ցանցեր,, ՊՁ-ում որպես փոխտնօրեն, տնօրեն:

2002-2004թթ.՝ - „Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ում՝ 1-ին փոխտնօրեն:

2004-2007թթ.՝ - „Հայաստանի էլեկտրական ցանցեր,, ՓԲԸ-ի „Մուսալեռ,, մասնաճյուղի տնօրեն:

21.05.2010թ. մինչև 13.06.2014թ. աշխատել եմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

13.06.2014թ.-ից նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության „Բարձրավոլտ էլեկտրացանցեր,, ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնին:

Ամուսնացած եմ, ունեմ երկու զավակ:

Արամ Անանյան

16.06.2014թ





## ՀՈՎԱԿԻՄ ՍԵՂՐԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ 23.04.1947թ.. Կրթություն -  
բարձրագույն  
1965-1970 թթ. Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական  
ինստիտուտ

Մասնագիտություն - ջերմային էլեկտրական կայաններ

Որակավորում - ինժեներ – ջերմաէներգետիկ

Աշխատանքային փորձ  
1970թ. ինստիտուտից գործուղվել է Երևանի ՋԷԿ և աշխատել կաթաստուրբինային  
արտադրամասի տուրբինային սարքավորումների շրջիկ-մեքենավար,  
մեքենավար, հերթափոխի պետ:  
1973թ. կայանի հերթափոխի պետ:  
1978թ. կաթաստուրբինային արտադրամասի պետի տեղակալ շահագործման  
գծով:  
1980-1987թթ. Երևանի ՋԷԿ-ի կուսակցական բյուրոյի ազատված քարտուղար:  
1987թ. Երևան ՋԷԿ-ի գլխավոր ճարտարագետ:  
1991թ.-ից նշանակվել է Երևանի ՋԷԿ-ի տնօրեն:  
1999թ.-ից «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:  
2005թ.-ից մինչև օրս «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, Համակցված  
շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի ղեկավար:

Պետական պարգևներ

1986թ. «Պատվո նշան» շքանշան

2010թ. «Անանիա Շիրակացու» մեդալ

## ՍԱՍՈՒՆ ՍԱՇԱՅԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1960 թվականին, Գորիս քաղաքում:

1978-1983թ.թ. ընդունվել և ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական  
ինստիտուտը:

1981 թվականից աշխատանքի է անցել Գորիս քաղաքի տարբեր  
ձեռնարկություններում, իսկ 1999 թվականից ՀԵՑ ՊՓԲԸ Գորիսի

շրջանային էլ. ցանցի տնօրեն:

2000 թվականից նշանակվել է ՀԵՑ ՓԲԸ «Գորիս էլ. ցանց» մասնաճյուղի տնօրեն, իսկ

2000թ. ապրիլ ամսից «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Արժանացել է տարբեր պատվոգրերի և շնորհակալագրերի:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



## Գրիգորյան Արսեն Ռազմիկի

“ՄԷԿ” ՓԲԸ գլխավոր տնօրեն .

Ծնվել է 22.05.1964թ. ք. Երևանում, ՀՀ:

Կրթությունը՝ բարձրագույն, ինժեներ-հիդրոտեխնիկ,

Տեխնիկական գիտությունների թեկնածու:

ՀՀ Ինժեներական Ակադեմիայի թղթակից անդամ:

Աշխատանքային ուղին սկսել է 1986թ.՝ որպես վարպետ, այնուհետև ավագ գիտական աշխատակցի պաշտոնից հասնելով մինչև “ՄԷԿ” ՓԲԸ գլխավոր տնօրեն: Տարբեր տարիների աշխատել է որպես գլխավոր ինժեներ, տեղամասի պետ, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, գործադիր տնօրեն, ՀՀ աշխատանքի պետական տեսչության տնօրեն, Գեղարքունիքի մարզի մարզպետ, տարածքային կառավարման նախարարի տեղակալ, ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության պետի տեղակալ, ՀՀ էլեկտրական Ցանցերի տարածքային կառավարման մարմինների հետ համագործակցության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ, Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ) ԲԲԸ գլխավոր տնօրեն:

Պարգևատրվել է Ֆ. Նանսենի անվ. Ոսկե մեդալով, ՀՀ տարածքային կառավարման նախարարի մեդալով և այլն:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

## ԱՇՈՏ ԼԵՎՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Ծնվել է 1968թ. ապրիլի 8-ին Երևանում:

1985թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը, 1992թ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը:

1995թ. ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանի գործարար կառավարման ֆակուլտետի մագիստրատուրան:

Տնտեսագիտության դոկտոր է: Երկու մենագրության և 11 գիտական հոդվածների հեղինակ:

Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ է անցել Շվեդիայի ազգային բանկում (1996թ.), Պրահայի Կառլի համալսարանում (1997թ.), Համաշխարհային բանկի և արժույթի միջազգային հիմնադրամի Վիեննայի միացյալ ինստիտուտում (1997, 1998թ.թ.), Լոնդոնի կառավարման թագավորական ինստիտուտում (2002թ.), Անգլիայի բանկի (1996թ.), Տոկիոյի համալսարանի (1999թ.) և Հարվարդի համալսարանի (2006թ.) ուսումնական կենտրոններում:

1995-97թ.թ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում (նախագահի խորհրդական, աշխատակազմի ղեկավար), 1997-98թ.թ.՝ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունում (աշխատակազմի ղեկավար, գլխավոր վարչության պետ):

1998-99թ.թ. եղել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, 1999-2001թ.թ.՝ ազգային հեռուստատեսության ֆինանսական տնօրենը, 2001-2003թ.թ.՝ Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի փոխնախագահը:

2004թ. հոկտեմբերի 1-ից աշխատում է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն /ՀրազՁԷԿ/» բաց բաժնետիրական ընկերությունում որպես գլխավոր տնօրենի տեղակալ, ապա՝ առաջին տեղակալ:

2011թ. ապրիլի 25-ին նշանակվել է «ՀրազՁԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն:

Ամուսնացած չէ:



## ՄԱՑԱԿԱՆ ԱՆԴՐԻԱՍԻ ՄԱՑԱԿԱՆՅԱՆԻ

ծնված 1954թ. հուլիսի 25-ին, կրթությունը՝ բարձրագույն

Մնացական Մնացականյանը 1971թ-ին ընդունվել և 1976թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետը «Արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների և գյուղատնտեսության էլեկտրամատակարարում» մասնագիտությամբ:  
Մ.Մնացականյանի աշխատանքային գործունեությունը ՀՀ էներգահամակարգում՝

- |      |   |          |   |
|------|---|----------|---|
| 1976 | - | 1982թ.թ. | «Հայգլխէներգո» ԱԳՎ «Արևելյան էլեկտրացանցեր» մ-ճ՝ ճարտարագետ-կարգավար, ավագ կարգավար, ԿԿԾ պետ:   |
| 1982 | - | 1996թ.թ. | «Հայգլխէներգո»՝ ԿԿԾ կարգավար, ավագ կարգավար, օպերատիվ գծով ծառայության պետի տեղակալ, «Հայէներգոարդ»ՊՁ գլխ.ճարտ-տի տեղակալ - ԿԿԾ պետ, Կարգավարական վարչության պետ- գլխավոր կարգավար, գլխավոր տնօրենի տեղակալ օպերատիվ մասով: |
| 1996 | - | 1997թ.թ. | ՀՀ էներգետիկայի և վառելիքի նախարարություն՝ էներգակիրների իրացման և շրջանային ցանցերի աշխատանքների համակարգման վարչության պետի տեղակալ, պետի պաշտոնակատար:   |
| 1997 | - | 2002թ.թ. | «Հայէներգո» ՊՁ «ԲԷՑ»ՊՁ «Կենտրոնական էլ.ցանցեր» մ-ղ՝ գլխավոր ճարտարագետ:   |
| 2002 | - | 2007թ.թ. | «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ՝ տեխնիկական գծով տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալ-տեխնիկական հարցերով տնօրեն:  |
| 2007 | - |          | «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր»ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:  |

Մ.Մնացականյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում՝ սկսած 1976 թվականից էներգետիկ համակարգի տարբեր բնագավառներում իրեն դրսևորել է որպես բանիմաց, իր գործը բազմակողմանի տիրապետող, բարձրակարգ մասնագետ, պարտաճանաչ անձնավորություն: Աշխատելով ՀՀ էներգետիկայի համակարգում ստեղծել է առողջ կոլեկտիվ, պատրաստել է որակյալ մասնագետներ:

Մ.Մնացականյանը էներգետիկայի բնագավառում ներդրած նշանակալի ավանդի համար պարգևատրվել է՝

- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով՝ **«Աշխատանքային արիություն» շքանշանով**՝ 1988 թվականի երկրաշարժի ժամանակ էներգետիկ օբյեկտների վերականգնողական աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար:
- **ՀՀ Նախագայի կողմից՝ Շնորհակալագրով**՝ Հայաստանի էներգետիկ համակարգի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ:
- **ԱՊՀ Վաստակավոր էներգետիկ է :**
- Ռուսաստանի դաշնության աշխարհաքաղաքական խնդիրների ակադեմիայի կողմից՝ **ոսկե մեդալով**՝ «ՀՀ անկախության 20 ամյակի կապակցությամբ» անվանակարգում ՀՀ էկոնոմիկայի զարգացմանն ուղղված ներդրման համար:
- Ղարաբաղյան պատերազմի վետերանների միության կողմից՝ ՀՀ անկախության 20 ամյակի կապակցությամբ՝ **«Շնորհակալագրով»**՝ Ղարաբաղյան պատերազմի վետերաններին մշտապես աջակցելու համար:

### **Խորհրդի գործունեությունը**

2014թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 5 նիստ, որից 1-ը հեռակա քվեարկությամբ, Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը՝ բոլոր նիստերին մասնակցել են Խորհրդի 9 անդամներ, երկու անգամ մասնակցել է Խորհրդի 1 նիստի:

### **Գործադիր մարմին**

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ գլխավոր տնօրենից՝ Մնացական Անդրիասի Մնացականյան, որի կենսագրությունը տրված է սույն հաշվետվության 17-րդ էջում:

2014թ. Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ և կորպորատիվ քարտուղար չի նշանակվել:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին» N779-Ա որոշման 1 կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան ստեղծվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն:

Նույն որոշման 6-րդ կետի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են հետևյալ պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրին քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր թվի 1/5 չափով.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

ՀՀ էներգետիկայի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2003թ. հոկտեմբերի 30-ին, որի որոշման 1-կետով հաստատվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ստեղծումը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի «ՀՀ էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003 – 2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003 – 2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն որոշման 2-րդ կետի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող ընկերության բաժնետոմսերի լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Ընկերության կանոնադրությունը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. նոյեմբերի 3-ին: Ընկերության 2010թ. հունիսի 25-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ կատարվել են փոփոխություններ կանոնադրությունում, որոնք սահմանված կարգով գրանցվել են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» N87-Ա որոշման 1 կետով Ընկերությանը տրամադրվել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերությունը իր կառուցվածքում ունի մեկ՝ «Էներգակապ» մասնաճյուղ:

Ընկերության տնօրինության տակ են գտնվում ներքոհիշյալ վարչական և արտադրական տարածքները.

ՀՀ Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին N779-Ա որոշման հավելված 1-ով փոխանցվել է շենք շինություն («Էներգակապ» մասնաճյուղ), որոնք սեփականության իրավունքով՝ 2005թ. հոկտեմբերի 18-ին, 1092.3 քառ. մետր մակերեսով, գրանցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-6 մատյանի 000295 համարի տակ, քաղ. Երևան, Արաբկիր համայնք, Մալխասյանց փող. թիվ 2 հասցեում, այդ թվում՝ վարչական շենք, պահեստներ, ավտոտնակներ, ծածկեր, բենզալցակայան:

Նույն կադաստրի պետական կոմիտեում 2006թ.-ից քաղ.Երևան, Մալխասյանց 2 հասցեի 0.265 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ՀՀ կառավարության 01.10.05թ. N199-Ն որոշման և ՀՀ հողային օրենսգրքի 23 հոդվածի պահանջների համաձայն, փոխանցվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին:

2006թ. Ընկերության կողմից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով զբաղեցրած հողամասի («Էներգակապ» մասնաճյուղ - 0.265 հա) նկատմամբ գրանցվել է

սեփականության իրավունք, որը ակտիվների կազմում ներառելու և հաշվապահական ձևակերպումներ տալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2/3 1-5/3-3058, 07.03.06թ. պարզաբանմամբ որպես հետաձգված եկամուտ Ընկերությունը ձևակերպել է 105.979 մլն դրամ: Նշված եկամուտը պետք է ճանաչվի որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, սվյալ հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների միջին կշռված մնացորդային օգտակար

ծառայության ժամկետի ընթացքում և վերագրվի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը գույք հանձնելու մասին» N924-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Աբովյան 27 հասցեում գտնվող՝ 3436.95 քառ. մետր մակերեսով ու 2327154 հազ. դրամ գնահատված արժեքով շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.13639 հեկտար հողատարածքը ներդրվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում: ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N150-Ա որոշմամբ «3436.95 քառ. մետր մակերեսով» բառերը փոխարինվել են «3536.95 քառ. մետր մակերեսով» բառերով, իսկ «2327154» թիվը՝ «2343603»:

2010թ. ապրիլի 12-ին սեփականության իրավունքով՝ 3536.95 քառ. մետր մակերեսով շենքը և 0.13639 հեկտար հողատարածքը՝ գրանցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010063-21 մատյանի 00210 համարի տակ, քաղ. Երևան, Կենտրոն համայնք, Աբովյան փող. թիվ 27 հասցեում:

## II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2014թ. ընթացքում ԸՆԿԵՐՈՒՅՈՒՆՆԸ, համապատասխան մակարդակով, իրականացրել է օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով նախատեսված բոլոր գործառնությունները՝ ապահովելով ՀՀ էներգահամակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Տարվա ընթացքում Կենտրոնական կարգավարական ծառայության աշխատակիցների մեղքով վթարներ չեն արձագագրվել:

Հանդիսանալով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակից, «ԷԷՀՕ» ՓԲԸ-ն իր փոխհարաբերությունները շուկայի այլ մասնակիցների հետ վարում է համապատասխան «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» ՀՀ ՀԾԿՀ 2008թ. հուլիսի 2-ի N347-Ն որոշման: «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի գործունեության ոլորտում կարևոր տեղ է հատկացված նաև ՀՀ ՀԾԿՀ «ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոններ» 2004թ. դեկտեմբերի 24-ի N176-Ն որոշմամբ սահմանված դրույթների իրագործմանը:

ԸՆԿԵՐՈՒՅՈՒՆՆԸ, լիցենզիայի պայմաններին համապատասխան, տարվա ընթացքում մշակել և արտադրող, բաշխող և տեղափոխող ընկերություններին է տրամադրել համապատասխան հրահանգներ:

Տեխնիկական բարձր մակարդակով և փոխադարձ վստահության մթնոլորտում է ապահովվում «Թավանիր» ընկերության ազգային կարգավարական կենտրոնի և ԸՆԿԵՐՈՒՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կարգավարական ծառայության կարգավարների միջև փոխհարաբերությունների և 220կՎ Ահար-1, Ահար-2 միջպետական էլեկտրահաղորդման գծերի օպերատիվ կառավարման վերաբերյալ կնքված համաձայնագրով նախատեսված պահանջների կատարումը: Պարբերաբար վերամշակվել են արդեն գործողության մեջ գտնվող հրահանգները և տրամադրվել համապատասխան ընկերություններին:

- Սպասարկվել է կապուղիներ, մալուխային և օդային կապի գծեր, ռադիո և այլ հատուկ կապի ու հեռուստամեխանիկայի սարքավորումներ, այդ թվում՝

SCADA/կապ համակարգ, որը իր մեջ ներառում է՝

- |   |            |
|---|------------|
| 1. Օպտիկամանրաթելային ճոպան (OPGW )       | – 560կմ.   |
| 2. Օպտիկամանրաթելային մալուխ – (OPAC)     | – 24.6 կմ. |
| 3. Օպտիկական վերջնամասային սարքեր– (CLTE) | – 39 հատ   |

4. Հեռանեխանիկայի սարքեր - (RTU)	– 28 հատ	
5. Էներգասնուցման անխափան սարքեր`		
• Լիցքավորման ագրեգատներ (Golero)	– 22 հատ	
• Ակունուլյատորային մարտկոցներ (109հատ)	– 22	կոմպ.
• Շարժիչ գեներատորներ EP6000	– 20 հատ	
• 220 կՎ/ 48 Վ - փոխակերպիչներ	– 15 հատ	
• 48Վ/ 220 Վ - փոխակերպիչներ	– 30 հատ	
6. SCADA – ցանցային Gatalyst սարքեր	– 8 հատ	
7. Ժամանակի սինխրոնիզացիոն սարք	– 2 կոմպ.	
8. Երկարատև ձայնագրման սարք	– 1 հատ	
9. Անընդհատ սնուցման սարք (UPS)	–15 հատ	
10.Ռեգերվ ավտոմատ միացման տրանսֆ. համակարգ	– 1 հատ	
11.Դիզել գեներատոր	– 1 հատ	
12.IP ավտոմատ հեռախոսային կայան (MX - ONe)	– 2 հատ	
13.IP ավտոմատ հեռախոսային կայան EBN	– 10 հատ	
14.IP և թվային հեռախոսներ	– 163 հատ	
15.Ունիվերսալ չափիչ սարքեր (P130EM)	– 490 հատ	
16.Հսկիչ մալուխներ	– 82.1 կմ.	
17.Ուժային մալուխներ	– 7.15կմ.	
18.Թվային կամրջակներ	– 31 հատ	
19.Համակարգիչներ	– 29 հատ	
20.Կարգավարի աշխատատեղ	– 4 հատ	
21.Կապի ցանցային հսկիչ սարք (NMS)	– 2 հատ	
22.4/3 լարային փոխակերպիչներ	– 40 հատ	
23.Միջանկյալ ռելեներ	– 1135 հատ	

և այլ մոդեմներ, սվիչներ, կոմպերտորներ ու օժանդակ միջոցներ:

Կապուղիներ, մալուխային և օդային կապի գծեր, ռադիո և այլ հատուկ կապի ու հեռուստամեխանիկայի սարքավորումներ, այդ թվում`

Բարձր հաճախ. սարքավորումներ	36 լրակազմ	56 կապուղի
Ռադիոռելեական սարքավորումներ	43 հատ	68 կապուղի
Ռադիոսարքավորումներ	86 կայան	86 կապուղի
Մալուխային կապի գծեր	63.7կմ	447 կապուղի

Օդային կապի գծեր	28 կմ	22 կապուղի
Խտացման սարքեր	23 հատ	276 կապուղի
Ավտոմատ հեռախոսակայան «Քվանտ»	1 հատ	1000 համար (265)
Ավտոմատ հեռախոսակայան «ԱՏՍԿ 50/200»	15 հատ	1200 համար
Կարգավարական կամուտատոր	8 հատ	270 արժեքներ
Վթարային սնուցման սարքավորումներ	32 հատ	257 մարտկոց

Կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ «Պրուդ» ե/կ ռեզերվային նպատակով կապուղու ստեղծում Ռ/Ռ սարքի միջոցով (տեխնիկական օգնություն «ՀԱԷԿ»-ին):
2. «ՀԱԷԿ» ՓԲԸ «Սև ջուր» պոմպակայան ռեզերվային նպատակով կապուղու ստեղծում Ռ/Ռ սարքի միջոցով (տեխնիկական օգնություն «ՀԱԷԿ»-ին):
3. «Հրազդան» ՀԷԿ - Ախպարա ջրամբար Ռ/Ռ կապուղու ստեղծում և IP հեռախոսային կապի ապահովում:
4. Արզնի ջրամբար - «Արգել» ՀԷԿ - «Արզնի» ՀԷԿ – ԿԿՀ Ռ/Ռ նոր կապուղու սպեղծում:
5. «Արգել» ՀԷԿ - «Չարենցավան -1» ե/կ Ռ/Ռ նոր կապուղու կազմակերպում:
6. «Գեղամա» մ/ճ - «Արևելյան» մ/ճ («ԲԷՑ» ՓԲԸ) կապի կազմակերպում Ռ/Ռ միջոցով:
7. Պայմանագրային հիմունքներով Ս com ընկերությանը օպտիկամանրաթելքային զույգերի տրամադրում: Դեպի Ջանգեզուր, Վանաձոր և Գյումրի ուղղություններով միջանկյալ պահանջված բոլոր կետերով (52 կետ):
8. «Հարավային» ե/կ-ից ադմինիստրատիվ շենք OPAC-ի տեղակայում և օպտիկական սարքերի տեղադրում «Մուսալեռ», «Երևան 110/35» «Արաքս» մ/ճ IP հեռախոսային կապի ապահովում:
- 9.«Արտաշատ»110կվ ե/կ - «Արաքս» մ/ճ Ռ/Ռ կապի կազմակերպում:
- 10.«Հրազդան» ՋԷԿ-ի ԲԲԸ –ի հերթափոխի պետի օպերատիվ հեռախոսային խոսակցության ձայնագրիչ սարքի կազմակերպում:

Ռեզերվային պահվող համակարգի անխափան աշխատանքը ապահովելու համար վերանորոգվել են՝

Ռադիոռելեային սարքեր	30 հատ
Բ/Յ սարքեր	25 հատ
Խտացման սարքեր	20 հատ

Անխափան սնուցման սարքեր	19 հատ
Ավտոմատ հեռախոսակայանի բլոկեր	15 հատ

Հանրապետության տարածքում գործող պղնձյա կապի մալուխներից նորոգվել կամ մասնակի փոխարինվել է հետևյալ ուղղություններով:

ԿԿՀ - «Երևան» ՀԷԿ	0.200 կմ.
ԿԿՀ - «ԲԷՑ» ՓԲԸ	0.120 կմ.
«Էներգակամ» մ/ճ – ԿԿՀ	0.252 կմ.
ԿԿՀ - «Շահունյան -2» Ե/Կ	0.250 կմ
ԿԿՀ - Էներգետիկայի նախարարություն	0.380 կմ.
«Վանաձոր -2» Ե/Կ - «Վանաձոր» ՋԷԿ	0.060 կմ.
«Որոտանի կասկադ» ՓԲԸ - «Շինուհայր» Ե/Կ	0.300կմ.
«Շինուհայր » - «Տաթև» ՀԷԿ	0.360 կմ.

Հին սարքավորումներից շահագործման անհրաժեշտությունը կորցնելու կապակցությամբ, հանվել և ապամոնտաժվել են՝ մալուխներ, Բ/Հ սարքավորումներ, անխափան սնուցման սարքեր, ինվերտորներ – АБП – 6.3, մարտկոցներ, դիսպետչերական կապի ավտոմատ սարքեր АДАСЭ, Ռ/ կայաններ FM 301, խտացման սարքեր, դիսպետչերական կոմուտատորներ:

Կատարվել են կարգաբերման սեզոնային և ձմեռային նախապատրաստական աշխատանքներ:

2014թ. ապահովվել է հանրապետության տարածքում կապի ծառայությունների աշխատանքը օպերատիվ ձևով սպասարկող 33 մարդատար. բեռնատար, հորատող, ամբարձիչ և հատուկ նշանակության ավտոմեքենաների նորմալ շահագործումը և նորոգումը:

### **III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ**

(Հաշվապահական հաշվեկշռի Ձև N1 և Ձև N2 կցվում է)

#### **1. Եկամուտներ և ծախսեր**

##### **1.1. Եկամուտներ**

1.1.1. Ընկերության տարեկան գործառնական եկամուտը հիմնական գործունեությունից կազմել է 1569.6 մլն դրամ (հավելված 1), խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 1475.4 մլն դրամ գումարի դիմաց (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 94.2 մլն դրամ), նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 137.4 մլն դրամ կամ 9.6%: Նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են. 1215.2 մլն դրամը՝ ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց (վճարող՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ); «ԵրՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից Հայաստան-Իրան ներկրված գազի դիմաց էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում (այդ թվում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Հրազդանի 5-րդ բլոկի կողմից արտադրված էլեկտրաէներգիան) Ընկերության մատուցած ծառայության դիմաց ստացված եկամուտ՝ 200.1 մլն դրամ (սակագնով նախատեսված էր 195.4 մլն դրամ), որից 128.3 մլն դրամը «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիան է, 71.8 մլն դրամը՝ 5-րդ բլոկի; որպես այլ գործունեությունից ստացված լրացուցիչ եկամուտ՝ 154.3 մլն դրամ, (նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 63.3 մլն դրամ կամ 70%), որից 34.2 մլն դրամը՝ Վրաստանից ներկրված էլեկտրաէներգիան՝ ԻԻՀ արտահանման ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց, 3.6 մլն դրամը՝ էներգահամակարգի պետ. ռեզերվի պահպանության համար մատուցած ծառայությունների դիմաց, որը ՀՀ էներգետիկայի նախարարի հրամանով դրված է ընկերության վրա, բանկի ավանդի տոկոս՝ 10.1 մլն դրամ, Աբովյան 27 շենքի տարածքի և օպտիկամալուխային գծերի վարձակալությունից՝ 41.9 մլն դրամ, «ՀԷՑ» ՓԲԸ-ին մատուցած լրացուցիչ ծառայությունների համար՝ 4.4 մլն դրամ, փոքր ՀԷԿ-երին ՌՊԱ դրվածքների հաշվարկի համար՝ 1.6 մլն դրամ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համար ՌՊԱ հաշվարկների համար՝ 20.0 մլն դրամ, «Թեղուտ» ՓԲԸ-ի համար շինարարական և կարգաբերման աշխատանքներ՝ 37.4 մլն դրամ և դուրս գրված հիմնական միջոցների վաճառքից՝ 1.1 մլն դրամ:

1.1.2. Ընկերության ակտիվների վերագնահատման և շնորհների ձևակերպումների արդյունքում ձևավորվել է ոչ գործառնական եկամուտներ՝ 478.0 մլն դրամ:

1.1.3. Միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվեկշռի կազմման նպատակով, որպես եկամուտ հաշվարկվում է գործառնական

(1569.6մլն դրամ) և ոչ գործառնական (478.0մլն դրամ) եկամուտների հանրագումարը՝ 2047.6մլն դրամ:

## 1.2.Ծախսեր

1.2.1.Ընկերության տարեկան գործառնական ծախսերը կազմել են 1769.0մլն դրամ (հավելված 2), որից՝

**նյութական ծախսեր** - կազմել են 63.2մլն դրամ (նախահաշվով նախատեսված 90.3մլն դրամ գումարի դիմաց), 27.1մլն դրամ գումարը տնտեսվել է եղանակային պայմաններից ելնելով էլեկտրաէներգիայի ավելի քիչ օգտագործման (9.6մլն դրամ) և կարգավարական կետի վահանակի պահեստամասերի ձեռք չբերման (17.4մլն դրամ, որը կապված էր կապալառուի ոչ ժամանակին մատակարարման հետ) արդյունքում;

**մաշվածություն** - հաշվարկվել է 673.2մլն դրամ (նախահաշվում նախատեսված 58.2մլն դրամ գումարի դիմաց), քանի որ Համաշխարհային Բանկի և ճապոնական Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին ձեռք բերված կազմ.տեխնիկայի, համակարգչային ծրագրի և SCADA ծրագրով նախատեսված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը ներառված չէ ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից հաստատված ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ Ընկերության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվում, որի արդյունքում ամորտիզացիոն ծախսերը, որոնք հաշվարկվել են նաև հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան նախահաշվից ավելի է հաշվարկվել 615.0մլն դրամ;

**վերանորոգման ծախսեր** - կազմել են 66.3մլն դրամ (նախահաշվով նախատեսված 89.4 մլն դրամ գումարի դիմաց), որում ընդգրկվել են Կարգավարական վահանակի սպասարկման և վերանորոգման ծախսերը՝ 37.2մլն դրամ, սերվերների և համակարգիչների սպասարկման և վերանորոգման ծախսերը՝ 12.3մլն դրամ, ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծախսերը՝ 9.8մլն դրամ, Աբովյան 27 և Մալխասյանց 2 շենքերի վրա կատարված ընթացիկ վերանորոգման և սպասարկման աշխատանքները 3.1մլն դրամ, հակահրդեհային պաշտպանության և համակարգիչների պրոֆիլակտիկայի, մաքրման և վերանորոգման աշխատանքները՝ 1.9մլն դրամ, վարագույրների և գորգերի քիմ մաքրման և լվացման աշխատանքները՝ 2.0մլն դրամ: Վերանորոգման ծախսերի հոդվածով 23.1մլն դրամ գումարը տնտեսվել է եղանակային պայմաններից ելնելով, Ընկերությանը պատկանող Մալխասյանց 2 հասցեի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքները չիրականացնելու արդյունքում (6.0մլն դրամ) և չի իրականացվել 220կՎտ Հաղթանակ, Անի և Աշնակ 1,2 օղային գծերի DPL բարձր հաճախականային սարքվածքների վերանորոգում (17.1մլն դրամ), քանի որ նշված գծի վրա մոնտաժվել է օպտիկամանրաթելային մալուխ (OPGW):

**աշխատավարձ** - հաշվարկվել է 705.8մլն դրամ (նախահաշվով նախատեսված 643.2 մլն դրամ գումարի դիմաց), լրացուցիչ 62.6մլն դրամ գումարը հաշվարկվել է Ընկերության այլ գործունեության իրականացման ընթացքում ներգրավված աշխատակիցներին որպես աշխատավարձի վճար, ինչպես նաև Ընկերության աշխատակիցներին լրավճար՝ այդ աշխատանքներին առավել մասնակցություն ցուցաբերելու համար;

**այլ ծախսեր** - կազմել են 79.2մլն դրամ (նախահաշվով նախատեսված 102.0մլն դրամ գումարի դիմաց), 22.8մլն դրամ գումարի տնտեսումը գոյացել է SCADA/կապ համակարգի ներդրման արդյունքում վարձակալական վճարի («Մետրոպոլիտեն» և «ԱրմենՏել» ՓԲԸ-ների կապուղիներից հրաժարվել) նվազեցման (19.6մլն դրամ), հեռախոսային կապի և այլ ծախսերի (3.2մլն դրամ) նվազեցման արդյունքում;

**վարկի սպասարկման ծախսեր** - կազմել են 93.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված 436.5մլն դրամ գումարի դիմաց), ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից Ընկերության ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ տարեկան ծախսերի և եկամուտների նախահաշվում ներառված են Համաաշխարհային և ճապոնական Բանկերի կողմից տրամադրված վարկերի և դրանց տոկոսների մարման համար անհրաժեշտ գումարներ (436.5մլն դրամ), սակայն փաստացի որպես ծախս ճանաչվել է միայն վարկի տոկոսների համար մարված գումարները՝ 93.1մլն դրամ, տարբերությունը 343.4մլն դրամ (31.12.2014թ. դրությամբ «ԷԷՀՕ» ՓԲԸ վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը կցվում է);


**այլ եկամուտների հաշվին կատարված ծախսեր** - կազմել է 83.2մլն դրամ (նախատեսված 38.1մլն դրամ գումարի դիմաց), որից՝ հրավիրված կազմակերպություններին ներքոհիշյալ աշխատանքները կատարելու համար՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պատվերով հաշվարկներ կատարելու համար 7.4մլն դրամ, SCADA/կապ համակարգի կարգաբերման և շինարարական աշխատանքների համար 23.6մլն դրամ, «Թեղուտ» ՓԲԸ-ի համար կատարված շինարարական և կարգաբերման աշխատանքներ 19.1մլն դրամ, ձեռք են բերվել ավտոմեքենաներ 11.1մլն դրամ՝ Ընկերության հիմնադրի բանավոր ցուցումով, վճարվել են աշխատակիցներին դրամական օգնության գումարներ 7.8մլն դրամ, կատարվել են Պետ.ռեզերվի պահպանման հետ կապված ծախսեր 3.0մլն դրամ, իրականացվել են ներկայացուցչական ծախսեր 7.1մլն դրամ, վճարվել է տույժ տուգանքի գումար (հարկային ակտ) 4.1մլն դրամ:

1.2.2.Ընկերության ոչ գործառնական ծախսերը (274.2մլն դրամ), որոնք գոյացել են փոխարժեքային տարբերությունից, վարկերի մարման դիսկոնտոլ հետաձգված և հարկերի փոխհատուցումից կատարված հաշվարկներից:

1.2.3.Միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվեկշռի կազմման նպատակով որպես ծախս հաշվարկվել է գործառնական (1769.0մլն դրամ) և ոչ գործառնական (274.2մլն դրամ), ծախսերի հանրագումարը՝ 2043.2մլն դրամ:

Ընդհանուր ուղղակի (գործառնական) ծախսերի մեջ առանձին ծախսային հոդվածների համամասնությունը տոկոսային արտահայտությամբ կազմում է՝

Ծախսեր	մլն դրամ	%
Հաշվարկներ աշխատակազմի հետ	705.8 մլն դրամ	39.9
Հունք և նյութեր	63.2 մլն դրամ	3.6
Մաշվածություն	673.2 մլն դրամ	38.0
Վերանորոգման ծախսեր	66.3 մլն դրամ	3.7
Վարկի %-ի մարում	93.1 մլն դրամ	5.3
Այլ ծախսեր	167.4 մլն դրամ	9.5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1769.0 մլն դրամ</b>	<b>100</b>



Շահութահարկի գծով ծախսը կազմել է 205.0հազ.դրամ: Ջուտ շահույթը, շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո կազմել է 4194.0 հազ. դրամ:

Ընկերության շահութաբաժնի վճարման քաղաքականությունը իրականացվում է ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N202-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 5-ի N400-Ն որոշմամբ կատարված լրացումների և փոփոխության հաշվառմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ.-ի նոյեմբերի 30-ի N1110-Ն հրամանով հաստատված «50 տոկոսից ավել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման հաշվարկ»-ի համաձայն: Ըստ հրամանով հաստատված հաշվարկի (կցվում է) 060 տողը 2014թ. արդյունքներով (հաշվի առած ավելացումները) կազմել է 11969.0հազ. դրամ (շահույթ)՝ նախորդ տարվա 10584.0հազ.դրամ շահույթի դիմաց:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման ենթակա շահութաբաժնի գումարը կազմում է զուտ շահույթի, հաշվի առած ավելացումները, 50%-ը կամ 5984.5հազ. դրամ՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից միջնաժամկետ հեռանկարում (2015թ., 2016թ., 2017թ.) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութաբաժինների գծով վճարման ենթակա տարեկան գումարների կանխատեսումներն այդ կազմակերպությունների բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական մարմին ներկայացվելու օրինակելի ձևաչափով նախատեսված 3650.0հազ.դրամ գումարի դիմաց (կցվում է):

## **2.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ** (հավելված 3)

2014թ. հունվարի 1-ի դրությամբ ընկերության դրամական մնացորդը կազմել է 169.4 մլն դրամ: 2014թ. ընթացքում նույնք է եղել 1847.9 մլն դրամ, այդ թվում ներքին շուկայում մատուցած ծառայության դիմաց («ՀԷՑ» ՓԲԸ) 1450.3 մլն դրամ, արտահանման ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց 226.5մլն դրամ և 171.1մլն դրամ այլ ծառայությունների դիմաց:

Ծախսվել է տարվա ընթացքում 1805.9մլն դրամ, այդ թվում աշխատավարձ – 521.4մլն դրամ, եկամտային հարկ – 174.0մլն դրամ, ԱԱՀ – 267.7մլն դրամ, հողի հարկ և գույքահարկ – 3.3մլն դրամ, շահութաբաժնի վճար – 5.3մլն դրամ, կարգավորման վճար – 1.8մլն դրամ, մարվել է՝ վարկ և վարկի % - 432.2մլն դրամ, մարվել է «Որոտանի ՀԷԿՀ» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների փոխառության գումարները – 33.6մլն դրամ, վարձակալական վճար – 35.4մլն դրամ («Մետրո» և «ԱրմենՏել»), վառելիք – 39.5մլն դրամ, էլեկտրաէներգիա - 20.2մլն դրամ, վերանորոգման ծախսեր – 80.0մլն դրամ

(տեսապատի սպասարկում – 44.6մլն դրամ, սերվերների և համակարգչային ցանցի տեխնիկական և ծրագրային սպասարկում – 12.5մլն դրամ, ավտոմեքենաների վերանորոգում և սպասարկում – 11.8մլն դրամ, հակահրդեհային ծառայության, տեսախցիկների և սերվերների պրոֆիլակտիկա, մաքրման և վերանորոգման աշխատանքներ – 4.6մլն դրամ, ձմռան նախապատրաստական և այլ վերանորոգման աշխատանքներ – 6.5մլն դրամ), պահեստամասեր – 15.0 մլն դրամ, գործուղման ծախսեր – 14.6մլն դրամ, լիցենզիոն տուրք – 5.0մլն դրամ, պահպանության հետ կապված ծախսեր – 7.2մլն դրամ, աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ – 4.8մլն դրամ, կապ, գրասենյակային գույք, տնտեսական և կոմունալ ծախսեր և այլն – 38.8մլն դրամ:

Այլ եկամուտների հաշվին կատարվել են կարգաբերման և մոնտաժային աշխատանքներ (SCADA/կապ համակարգի համալրում) – 28.4մլն դրամ, «Թեղուտ» ՓԲԸ-ի համար կատարվել են շինարարական և կարգաբերման աշխատանքներ – 36.0մլն դրամ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համար կատարվել են հաշվարկներ – 8.9մլն դրամ, ավտոմեքենայի ձեռք բերման համար – 11.1մլն դրամ, ներկայացուցչական ծախսեր – 7.1մլն դրամ, պետ ռեզերվ – 3.0մլն դրամ, դրամական օգնություն – 7.8մլն դրամ: Մնացորդը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 211.4մլն դրամ՝ որից 143.0մլն դրամ գումարը կուտակվել է 2015թ. փետրվարի 10-ին ճապոնական բանկի վարկը և վարկի %-ը մարելու նպատակով:

### **3. ԴԵՔԻՏՈՐՆԵՐ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐՆԵՐ**

3.1 Դեքիտորական պարտքերը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 152179.0հազ.դրամ, տարվա ընթացքում ավելացումները՝ 1853769.0հազ.դրամ, նվազեցումները՝ 1847016.0հազ.դրամ, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ դեքիտորական պարտքի մնացորդը կազմել է 158932.0հազ.դրամ (տեղեկանքը կցվում է):

3.2 Պետբյուջեի նկատմամբ կրեդիտորական պարտքերը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 17130.0հազ.դրամ, տարվա ընթացքում ավելացումները՝ 506118.0հազ.դրամ, նվազեցումները՝ 507996.0հազ.դրամ, 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը Պետբյուջեի նկատմամբ կազմել է 15252.0հազ.դրամ:

3.3 Այլ կրեդիտորական պարտքերը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 7690.0հազ.դրամ, տարվա ընթացքում ավելացումները՝ 309035.0հազ.դրամ, նվազեցումները՝ 306777.0հազ.դրամ, 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը Պետբյուջեի նկատմամբ կազմել է 9948.0հազ.դրամ (տեղեկանքը կցվում է):

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության  
12 դեկտեմբեր 2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական  
փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ  
սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 1

## ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒ

31 դեկտեմբերի 2014թ

(ամսաթիվ, ամիջու, տարի)

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	<b>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ</b>	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Էներգետիկական համակարգի կարգավարական ծառայություն	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		27312003639
Հարկ վճարողի հաշվառման համարը		01547732
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	<b>ք. Երևան, Արմավյան 27</b>	հեռախոսը 56-22-07(26)
Փաստացի գործունեության իրականացման վայրը	<b>ք. Երևան, Արմավյան 27</b>	հեռախոսը 54-35-09

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
<b>I. Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	010	8,413,640	8,261,170
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	-	-
Ոչ նյութական ակտիվներ	030	168,530	153,700
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	18,973	29,268
1%	071	18,973	29,268
	072	-	-
Հետաձգված ամորտիզացիա	073		
Կանխավճարներ	074		-
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>080</b>	<b>8,601,143</b>	<b>8,444,138</b>
<b>II. Ընթացիկ ակտիվներ</b>			
Նյութեր	090	19,979	17,040
Աճեցվող և բտվող կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110	611	324
Անավարտ արտադրություն	120		
Արտադրանք	130		
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	9,521	3,487
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	135,668	158,932
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	-	-
Այլ դեբիտորական պարտքեր	180	6,990	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	153,000	181,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	16,395	30,357
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	946	5,519
ԱԱՀ	211	946	1,165
	212		
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>	<b>220</b>	<b>343,110</b>	<b>396,659</b>
<b>Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ</b>	<b>230</b>	<b>8,944,253</b>	<b>8,840,797</b>

<b>ՊԱՍԻՎ</b>			
	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժա- մանակաշրջանի) վերջին
1	2	3	4
<b>III. Սեփական կապիտալ</b>			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	1,883,701	1,883,701
Էմիսիոն եկամուտ	250		
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260	495,947	495,947
Կուտակված շահույթ	270	2,706,728	2,705,629
Պահուստային կապիտալ	280		
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290		
Դիսկոնտ	291		
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>300</b>	<b>5,086,376</b>	<b>5,085,277</b>
<b>IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	2,479,124	2,508,481
Հետաձգված հարկային պարտավորություններ	320	494,601	460,556
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	337,778	306,937
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350		
Հետաձգված հարկային պարտավորություններ	351		
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	<b>360</b>	<b>3,311,503</b>	<b>3,275,974</b>
<b>V. Ընթացիկ պարտավորություններ</b>			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	-	-
Կարճաժամկետ փոխառություններ	380	462,461	380,404
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	7,315	9,629
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	168	-
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	36,103	44,519
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	40,120	30,175
